600.0003.10.01.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2019 թվականի №3Ա
ք.Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի նոյեմբերի 6-ի №184 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության 4-րդ էներգաբլոկի հովացման աշտարակի հարակից տարածքը՝ 1,72 հա մակերեսով, և 4-րդ էներգաբլոկի հովացման աշտարակի հարակից տարածքում՝ վարչական շենքը 668 քմ մակերեսով (այսուհետ՝ №1 գույք), «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն,

բ) Ընկերությունը 2018 թվականի դեկտեմբերի 5-ի №210 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության 0,63 հա մակերեսով հողատարածքը, 110/6 ԿՎ լարման, 16000 ԿՎա հզորության 20S պահուստային տրանսֆորմատորն՝ իր 110 ԿՎ լարման МКП-110/600 տիպի յուղային անջատիչով, 110 ԿՎ լարման 3 հատ բաժանիչներով և պարպիչներով (այսուհետ՝ №2 գույք) «ՕԿԱԻԴՕ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն,

գ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2018 թվականի նոյեմբերի 27-ի №ՄՍ/2.3-13/1320-18 և դեկտեմբերի 6-ի №ՄՍ/2.2-21/1393-18 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի

աշխատակազմ՝ գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

դ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի սույն թվականի դեկտեմբերի 27-ի №02//1892-2018 գրությամբ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատարի սույն թվականի դեկտեմբերի 13-ի №02/24.9/42725-18 հանձնարարականով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացրած դիրքորոշումները՝ սույն որոշման նախաբանի «բ» և «գ» կետերում նշված գործարքների մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

ե) Հանձնաժողովի կողմից նշված գործարքներին համաձայնություն տալը, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի վնասում ազգային անվտանգությունը և պետական շահերը, իսկ ձեռքբերողի՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող և անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը նշված գործարքների նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության №1 գույքը «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն:
2. Համաձայնություն տալ Ընկերության №2 գույքը «ՕԿԱԻԴՕ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
    1) սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նշված գործարքները կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել այդ գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները.

2) Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
10 հունվարի 2019թ.